Պարույր Սևակ

Ժխտում եմ

Ասում են, թե առանց սիրո
Կարելի է մեկտեղ ապրել:
Ես ժխտում եմ.
Կարելի է չմահանա՛լ,
Ո՛չ թե ապրել:
Կժխտեի ես արևի՛ գոյությունն էլ,
Թե արևը չշողշողար,
Այլ գրքերում անփայլ լողար
Ու գրքերում թաղվե՛ր միայն:
Կժխտեի ես տերևի՛ գոյությունն էլ,
Թե տերևը ծառի վրա ոչ թե շողար,
Այլ ածուխի շերտերի մեջ պեղվե՛ր միայն:
Կժխտեի ակներևի՛ գոյությունն էլ,
Ակներևը թե չերևար՝
Թե նա իբրև լավ ցանկություն
Ջեղվե՛ր միայն:
Ես լա՛վ գիտեմ,
Թե ինչ բան է ցանկությունը.-
Ետ ես բերում անդարձ կորած մանկությունը,
Փոխարկում ես էժանության թանկությունը.
Սնանկության խեղդող ձեռքից

Ազատվում ես չստանալիք ժառանգությամբ.
Տնանկության բաց երկրնքից
Դու զատվում ես ցնորական բնակությամբ.
Աղմըկարար աշխատանքից
Շունչ ես քաշում մտացածին մենակությամբ
Բարակ մեջք ես դու երազում,
Չա՛ղ աղջիկըս.
Երկու առողջ ոտք ես ուզում,
Կա՛ղ աղջիկըս.
Հավանաբար աչքն է հուզում
Քեզ, չղջի՛կըս.
Տրորվող խոտ,
Դու ուզում ես անշուշտ լեզու.
Դու, մութ գիշե՛ր՝
Թեկուզ մի քիչ լույս ու լազուր...
Ես լա՜վ գիտեմ,
Թե ինչ բան է ցանկությունը:
Բայց ցանկությա՞մբ լոկ լիանալ,-
Ես ժխտում եմ:
Երազանքո՞վ լոկ հիանալ,-
Ես ժխտում եմ:
Ես ժխտում եմ, չեմ ընդունում,
Երբ ժխտում են խոսքո՜վ միայն,
Ո՛չ թե փորձով,
Ո՛չ թե գործով:
Ես ժխտում եմ՝ երբ չեն փնտրում
Առաջ տանող մի նոր ճամփա,
Այլ սպառնում վերադարձով.
Երբ լրջորեն հոխորտում են ու պարծենում
Ոչ պարզապես եղած սառցով,

Այլ պաշարով և ա՛յն ջրի,
Եվ ա՛յն ձրի
Էժան շոգու,
Որ չհալած ու գոլորշի դեռ չդառած
Այդ սառույցն է պարունակում...
Ինչպես որ դուք չեք հավատում
Միջնադարյան ոգիներին,
Գոյությունն եմ ես էլ ժխտում շոգիների,
Եթե նրանք... դեռ սառույց են:

04, 08.VI.1957թ.
Մոսկվա